

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՆՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն
և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության
Պետական կառավարման ակադեմիայում

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆ.
Դավիթ Ներսիկի Հախվերդյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
Տիգրան Վլադիմիրի Հարությունյան

տնտեսագիտության թեկնածու
Արթուր Շահենի Սողոմոնյան

Առաջատար կազմակերպություն՝


**Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2022թ.-ի հուլիսի 8-ին, ժամը 15:00-ին,
Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության
թիվ 015 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ ք. Երևան, 0009, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական
համալսարանի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2022թ.-ի մայիսի 23-ին:

Տնտեսագիտության թիվ 015
մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տ.գ.թ., դոցենտ՝  Ա.Հ. Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Տնտեսության տարածքային զարգացման անհամաչափություններն այս կամ այն չափով բնորոշ են բոլոր երկրներին և նրանց սոցիալ-տնտեսական զարգացման լուրջ խոչընդոտ են հանդիսանում: Դրանք պայմանավորված են աշխարհագրական, բնակլիմայական, ժողովրդագրական և երկրի տնտեսական զարգացումը պայմանավորող այլ գործոններով: Տարածքային զարգացման անհամաչափությունների խորացումը բնորոշ է հատկապես զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներին: Հետևաբար, աղքատության և գործազրկության կրճատման, բնակչության բարեկեցության բարձրացման նպատակով մեր երկրի համար հատկապես կարևորվում է այնպիսի քաղաքականության մշակումն ու իրականացումը, որը ոչ միայն չի խորացնում անհամաչափությունները, այլ նաև ապահովում է զարգացման տարածքային ընդգրկվածություն:

Տարածքային զարգացումը, որպես պետական քաղաքականության անբաժանելի մաս, երկրների ուշադրությանն արժանացել է դեռևս 19-րդ դարի կեսերին: Համաշխարհային տնտեսության զարգացման հետագա ողջ պատմությունը հարուստ է աշխարհի երկրների տարածքային զարգացման քաղաքականության իրականացման տարբեր մոտեցումներով և դրսևորումներով, որոնց շարժառիթները և՛ քաղաքական են, և՛ տնտեսական:

Տարածքային զարգացման անհամաչափությունները Հայաստանի Հանրապետությունում հատկապես սկսել են խորանալ տնտեսական աճի արագացմանը զուգընթաց՝ 2000-ական թթ.-ից, և հիմնականում արտահայտվում են մայրաքաղաք Երևանի տնտեսական դերի և նշանակության աճով, որի արդյունքում կենսամակարդակի տարբերությունը Երևանի և հանրապետության մարզերի միջև անընդհատ աճել է: Նշանակալի են նաև անհամաչափությունները մարզերի միջև: Երկարաժամկետ հեռանկարում, տարածքային մեծ և առավել ևս, խորացող անհամաչափությունները կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն բացասաբար անդրադառնալ երկրի ընդհանուր տնտեսական զարգացման և բնակչության կյանքի որակի վրա:

Ուստի, ատենախոսության շրջանակներում ՀՀ տնտեսական տարածքների (մարզերի) սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունների պատճառների պարզաբանումը, դրանց հետևանքների գնահատումը, առկա անհամամասնությունները մեղմելու կամ չեզոքացնելու ուղղությամբ գործնական առաջարկների ներկայացումը, ՀՀ-ում դրանց ներդրման հնարավորությունների ուսումնասիրությունը հանդիսանում են արդիական գիտական հիմնախնդիր:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է միջազգային և հայրենական փորձի ուսումնասիրության հիման վրա բացահայտել ՀՀ տնտեսության տարածքային զարգացման անհամաչափությունները, գնահատել դրանց սոցիալ-տնտեսական հետևանքներն ու առաջարկել այդ անհամաչափությունների մեղմմանն ուղղված գործնական ծրագրեր: Նշված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ հետազոտել տնտեսության տարածքային զարգացման էությունն ու առանձնահատկությունները, ուսումնասիրել թեմային վերաբերող գիտական գրականությունը,
- ✓ ուսումնասիրել տարածքային զարգացման քաղաքականության արտերկրյա փորձը, գնահատել ՀՀ-ում դրանց ներդրման հնարավորությունները,
- ✓ մշակել երկրների տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման քանակական գնահատման ընդհանրական համաթիվ,
- ✓ գնահատել ՀՀ տարածքային անհամաչափություններն ըստ զարգացման ոլորտային ուղղությունների,
- ✓ համակարգային գնահատման ենթարկել համայնքների բյուջետային եկամուտները՝ ՏԻՄ-երին օրենքով ամրագրված լիազորությունների իրականացման համատեքստում,
- ✓ վերլուծել վարչատարածքային բարեփոխումների ծրագրի տնտեսական և հասարակական-քաղաքական նպատակահարմարությունը,
- ✓ առաջարկել համայնքների բյուջետային եկամուտների ամրապնդման բարեփոխումների ծրագիր ուղղված ՏԻՄ-երի ֆինանսական ինքնուրույնության ապահովմանը,
- ✓ դիտարկել տարածքային համաչափ զարգացմանն ուղղված հիմնական կառուցակարգերը, գնահատել դրանց ներդրման կամ հետագա զարգացման հնարավորությունները, կատարել առաջարկություններ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն է Հայաստանի տնտեսության տարածքային զարգացման համակարգը անհամաչափությունների մեղմման առաջնահերթությունների համատեքստում: Հետազոտության առարկան ՀՀ տնտեսության տարածքային զարգացման անհամաչափություններով պայմանավորված սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներն են:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության համար տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերը, մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին», «Տարածքային կառավարման մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքները, ինչպես նաև հիմնախնդրին նվիրված հայրենական և արտասահմանյան գիտական աշխատությունները:

Հետազոտության տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ և այլ երկրների պաշտոնական վիճակագրական ծառայությունների հրապարակումները, ՀՀ համայնքների բյուջեների ամփոփ տվյալները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսամաթեմատիկական, վիճակագրական, գիտական վերացարկման, համեմատական, գործոնային և ֆինանսական վերլուծության մեթոդները:

Հետազոտության գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական նշանակություն, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- ✓ Տարածքային զարգացման քանակական գնահատման միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում մշակվել է ցուցանիշների համակարգ, որի հիման վրա հաշվարկվել են երկրների և նրանց առանձին տարածքների սոցիալ-

տնտեսական զարգացումը բնութագրող ոլորտային ինդեքսներ: Դրանց հաշվարկման և վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ դիտարկվող երկրների մեծամասնությունում տնտեսական զարգացումը հանգեցրել է տարածքային անհամաչափությունների խորացմանը:

- ✓ Համայնքային բյուջեների եկամուտների ու ծախսերի վերլուծության արդյունքում իրականացվել է ՏԻՄ-երի ֆինանսական ապահովվածության քանակական գնահատում: Որոշվել է համայնքների ֆինանսական կայունության աստիճանն ու բացահայտվել են ազդող հիմնական գործոնները:
- ✓ ՀՀ մարզերի համար հաշվարկվել են տարածքային զարգացման ոլորտային ինդեքսներ՝ հիմք ընդունելով մշակված ցուցանիշների համակարգը: Արդյունքում՝ գնահատվել է մեր երկրի սոցիալ-տնտեսական բևեռացման աստիճանը: Միաժամանակ, նույն ցուցանիշների հիման վրա իրականացվել է կլաստերային վերլուծություն, ինչի արդյունքում մարզերն ընդգրկվել են տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող 4 հիմնական խմբերում՝ ընդգծելով մայրաքաղաքի և Սյունիքի մարզի առաջատարությունը մնացած մարզերի նկատմամբ:
- ✓ Իրականացվել է վարչատարածքային բարեփոխումների ծրագրի տնտեսական արդյունավետության գնահատում, որի հիման վրա արձանագրվել է ինչպես ծախսերի տնտեսում, դոտացիաների ու սեփական եկամուտների որոշակի աճ, կառավարման մարմինների հաստիքների արդյունավետ վերաբաշխում, այնպես էլ համայնքների խոշորացման հետ կապված մի շարք հիմնախնդիրներ, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետությունը, հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների հասանելիությունը, խոշորացված համայնքում ընդգրկված բնակավայրերի զարգացման համաչափությունը:
- ✓ Վերլուծվել են եկամտային հարկից և շահութահարկից մասհանումները՝ որպես համայնքային եկամուտների այլընտրանքային աղբյուրներ և ՏԻՄ-երի ֆինանսական ինքնուրույնության ապահովման հիմնական ուղղություն: Ներկայացվել է առաջարկվող բարեփոխումների ծրագրի ներդրման գործնական քայլերի նկարագրություն, որի երկարաժամկետ նպատակը հանդիսանում է ֆինանսական համահարթեցման դոտացիաների փոխարինումը հարկային մասնահանումներից եկամուտներով և դրա արդյունքում՝ ինքնաբավ համայնքային տնտեսությունների ձևավորումը:
- ✓ Առանձնացվել են ՀՀ տարածքային համաչափ զարգացմանն ուղղված հիմնական կառուցակարգերը, գնահատվել են դրանց ներդրման կամ հետագա զարգացման հնարավորությունները, ներկայացվել են որոշ գործնական մոտեցումներ՝ ուղղված այդ հնարավորությունների կենսագործմանը:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Սույն հետազոտությունը մի քայլ է Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման քաղաքականության կատարելագործման և հետագա զարգացման, միջբյուջետային հարաբերությունների բարելավման ուղղությամբ: Ատենախոսության թեմայի

շրջանակներում իրականացված բազմակողմանի ուսումնասիրությունները և ներկայացված առաջարկությունները տեսական և գործնական նշանակություն ունեն և կիրառման դեպքում իրական հիմք կարող են հանդիսանալ համայնքների բյուջեների ֆինանսական բազայի ամրապնդման և արդյունավետության բարձրացման, ՏԻՄ-երի կայացման և ինքնուրույնության ապահովման և ի վերջո, տարածքային զարգացման անհամաչափությունների մեղմման համար:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ ֆինանսների, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի, ՀՀ համայնքների և այլ կազմակերպությունների կողմից՝ համապատասխան քաղաքականության մշակման, բարեփոխումների իրականացման համար, ինչպես նաև տնտեսագետ-հետազոտողների, գիտնականների, ասպիրանտների և ուսանողների կողմից՝ առաջադրված հիմնախնդրի հետագա ուսումնասիրության համար:

Հետազոտության արդյունքները քննարկվել են ՀՀ Պետական կառավարման ակադեմիայում: Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 8 գիտական հոդվածներում:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը բխում է հետազոտության նպատակից և խնդիրներից: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը շարադրված է 187 էջի վրա՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի նպատակն ու խնդիրները, ստացված հիմնական տեսական ու գործնական արդյունքները, ինչպես նաև գիտական նորույթն ու դրա գիտագործնական նշանակությունը և կիրառման հնարավոր ուղղությունները, կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսության տարածքային զարգացման հիմնական բնութագրերն ու առանձնահատկությունները» գլխում ներկայացվել են տարածքային զարգացման էությունն ու բնութագրերը, վերլուծվել է տարածքային զարգացման քաղաքականության միջազգային փորձը, մշակվել և հաշվարկվել են երկրի և նրա առանձին շրջանների սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող ոլորտային ինդեքսներ 18 երկրի օրինակով:

Տնտեսության տարածքային զարգացման անհամաչափություններն, ըստ էության, բնորոշ են բոլոր երկրներին: Դրանք պայմանավորված են բազմաթիվ օբյեկտիվ գործոններով: Սակայն, որքան էլ այդ պատճառները լինեն բնականոն ու գիտականորեն բացատրելի, այդուհանդերձ, դրանց հետևանքները ցանկալի չեն, սրում են հասարակական կյանքի բոլոր ոլորտների (հատկապես՝ քաղաքական ու

տնտեսական) լարվածությունն ու ծնում դժգոհություններ, անկայունություն, ճգնաժամեր, գործազրկություն ու աղքատություն:

Երկրի տարածքային զարգացման անհամաչափությունները սոցիալական ու տնտեսական զարգացման մակարդակների շեղումներն են, որոնք, որպես արդյունք, խոչընդոտում են տնտեսական աճն ու կայուն զարգացումը ինչպես առանձին տարածքներում, այնպես էլ, որպես հետևանք, ամբողջ երկրում¹:

Տարածքային զարգացման անհամաչափությունների խորացումն առավել մտահոգիչ է զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների դեպքում, որտեղ տնտեսական զարգացման անհամաչափությունները, ֆինանսական միջոցների սակավության պայմաններում, հանգեցնում են նաև սոցիալական շերտավորման:

Տարածքային անհամաչափությունների մեղմմանն ուղղված պետական քաղաքականության վերաբերյալ մասնագետների շրջանում գոյություն ունեն տարբեր կարծիքներ: Առանձնացվող հիմնական մոդելները երկուսն են՝ ֆրանսիական (մայրցամաքային) և անգլո-սաքսոնական:

Մայրցամաքային մոդելի առանձնահատկությունն այն է, որ վարչատարածքային միավորներում համատեղված են պետական և տեղական կառավարման ձևերը, այսինքն՝ նշանակովի և ընտրովի տեղական իշխանությունները: Անգլո-սաքսոնական մոդելի մունիցիպալ կառավարման ժամանակակից համակարգի առավել բնութագրական գիծը տեղական ինքնակառավարման մարմինների՝ կենտրոնական իշխանությունից համեմատական անկախությունն է: Այս մոդելը թույլ է տալիս տեղական բնակչությանը և նրա ներկայացուցչական մարմինն համընդհանուր վերահսկողություն իրականացնել պատասխանատու անձանց և կառավարման մարմինների գործունեության նկատմամբ:

Սոցիալ-տնտեսական զարգացում հասկացությունը կարելի է սահմանել որպես երկրի կամ նրա տարածքի մաս հանդիսացող առանձին շրջանի տնտեսության զարգացման գործընթաց, որի արդյունքը կլինի նրա գործունեության բարելավումը՝ որոշակի սոցիալական պահանջմունքների բավարարման համատեքստում: Սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի գնահատման տեսանկյունից խնդիրը հանդիսանում է այնպիսի ցուցանիշների ընտրությունը, որոնք առավել ընդգրկուն կերպով կարտացոլեն երկրի (տարածաշրջանի) սոցիալական կյանքի, բնակչության կենսամակարդակի իրական պատկերն ու տնտեսական համակարգի ուժեղ և թույլ կողմերը:

Երկրի և նրա առանձին տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման և դրա համաչափության գնահատման տարաբնույթ մոտեցումների ուսումնասիրության արդյունքում ցուցանիշների համակարգ է մշակվել նաև մեր կողմից: Համակարգում ընդգրկված են երկրի սոցիալ-տնտեսական կյանքի ամենատարբեր կողմերը բնութագրող առավել կարևոր 20 ցուցանիշներ, որոնք առանձնացված են 5 հիմնական խմբերում (ուլորտներում)՝ ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական, կրթական,

¹ Մելքունյան Հ., «Տնտեսության տարածքային զարգացման սոցիալ-տնտեսական բնութագրիչների վերլուծություն (ՀՀ օրինակով)», ՀՀ տնտեսության զարգացման առաջնահերթությունները. Ներքին և արտաքին մարտահրավերներ, ՀՊՏՀ 28-րդ գիտաժողովի նյութեր, էջ 346-359, Երևան 2021:

առողջապահական: Հստ նշված խմբերի ցուցանիշների համակարգը ներկայացված է աղյուսակ 1-ում²:

Աղյուսակ 1.

Սոցիալ-տնտեսական ցուցանիշների համակարգն՝ ըստ 5 հիմնական խմբերի

| Ժողովրդագրական | Սոցիալական | Տնտեսական | Կրթական | Առողջապահական |
|------------------------------------|---|--|--|---|
| Բնակչության թիվ | Աղքատության մակարդակ | Համախառն թողարկում | Հանրակրթական դպրոցներում աշակերտների թիվը 1000 մարդու հաշվով | Բժշկների թիվը 100.000 մարդու հաշվով |
| Բնակչության աճ | Գործազրկության մակարդակ | Արդյունաբերության մասնաբաժինը համախառն արդյունքում | Բուհերում ուսանողների թիվը 1000 մարդու հաշվով | Հիվանդանոցային մահճակալների թիվը 1.000 մարդու հաշվով |
| Կին/տղամարդ հարաբերակցություն | Միջին տարեկան աշխատավարձ | Ծառայությունների մասնաբաժինը համախառն արդյունքում | Բուհերում ընդգրկվածություն (20-24տ. տարիքային խումբ) | Բժշկական հաստատությունների թիվը 100.000 մարդու հաշվով |
| Բնակչության տնտեսական ակտիվություն | Մեկ շնչի հաշվով սպառողական ծախսեր | Մեկ շնչի հաշվով անձնական եկամուտ | | |
| | Տնային տնտեսությունների՝ հետերնետին հասանելիություն | Զբաղվածության կենտրոնացվածությունը ըստ տնտեսության ոլորտների (Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքս) | | |

Հետազոտության համար վերը նշված ցուցանիշները դիտարկվել են 18 երկրներում՝ ըստ դրանց վարչատարածքային բաժանումների, 2005-2019թթ. ժամանակահատվածի համար: Երկրները պայմանականորեն դասակարգվել են 3 խմբերում (աղյուսակ 2): Ցուցանիշների համադրելիության ապահովման համար դրանք նորմավորվել են [0;1] միջակայքում: Համաթվի հաշվարկին մասնակցող ցուցանիշների կշիռների հաշվարկման նպատակով կիրառվել է առաջին գլխավոր կոմպոնենտի մեթոդը:

Աղյուսակ 2.

Երկրների ցանկն՝ ըստ դրանց պայմանական խմբերի

| | |
|------------------------------|--|
| Զարգացած երկրներ | ԱՄՆ, Կանադա, Գերմանիա, Ֆրանսիա, Բելգիա, Ավստրիա, |
| ԿԱԵ երկրներ | Հունգարիա, Սլովակիա, Լեհաստան, Ռումինիա, Բուլղարիա, Չեխիա |
| ԵԱՏՄ և հարևան երկրներ | Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Թուրքիա, Վրաստան |

Վերլուծության արդյունքում ստացված կշռային գործակիցների հիման վրա հաշվարկվել են տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտային համաթվեր ինչպես դիտարկվող երկրների, այնպես էլ նրանց առանձին շրջանների համար: Հաշվարկն իրականացվել է հետևյալ բանաձևի միջոցով.

$$SQI = \sum_{i=1}^n a_i * x_i$$

² Мелкумян О.А., Ахвердян Д.Н., Проблема региональной асимметрии в контексте социально-экономического развития страны, Экономика и предпринимательство, № 11 (136), 2021, стр. 637-646.

որտեղ,

SՋԻ – տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտային ինդեքսն է,
xi – i-րդ ցուցանիշի նորմավորված արժեքը [0;1] միջակայքում:
ai – i-րդ ցուցանիշի կշռային գործակիցը:

Ոլորտային ինդեքսների հաշվարկման և դրանց վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ հիմնական խնդիրը հանգում է դրանց տարածքային բաշխվածությանը: Չնայած երկրի տնտեսության և սոցիալական ոլորտի աճի ընդհանուր միտումներին, կառավարությունները բախվում են տարածքային ներառական զարգացման խնդրին: Անհրաժեշտություն է առաջանում մշակել և իրականացնել տարածաշրջանային զարգացման արդյունավետ ռազմավարություն, որը շատ դեպքերում ձախողվում է:

Ատենախոսության երկրորդ «Տարածքային զարգացման ընթացքն ու հիմնական դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ներկայացվել են ՀՀ վարչատարածքային բաժանման ինստիտուցիոնալ և օրենսդրական հիմքերը, քանակական գնահատման է ենթարկվել ՏԻՄ-երի լիազորությունների և ֆինանսական հնարավորությունների միջև առկա խզումը, իրականացվել է երկրի տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման գնահատում մշակված ինդեքսի միջոցով, ինչպես նաև մարզերի կլաստերիզացիա, վերլուծվել են վարչատարածքային բարեփոխումների ծրագրի տնտեսական էֆեկտները:

Հայաստանի Հանրապետությունում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ինստիտուտների ձևավորման հիմքերն ամրագրված են Սահմանադրությամբ, «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Տարածքային կառավարման մասին», «Բյուջետային համակարգի մասին» օրենքներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

ՀՀ վարչատարածքային միավորներն են մարզերն ու համայնքները: Մարզերը կազմված են գյուղական և քաղաքային համայնքներից: Համայնքը կարող է ընդգրկել մեկ կամ ավելի թվով բնակավայրեր:

Ներկայումս երկրում ընթանում է Վարչատարածքային բարեփոխումների (համայնքների խոշորացման) ծրագիրը, որի վերջնական արդյունքում կձևավորվի ընդհանուր առմամբ, 78 համայնք: Ծրագրի հիմնական ծավալը և ավարտը նախատեսվում է իրականացնել 2021-2022թթ.-ին:

Ակնհայտ է, որ ցանկացած պետություն, պետական համակարգ և նրա կողմից իրականացվող այս կամ այն քաղաքականություն չի կարող արդյունավետ գործել առանց համապատասխան ֆինանսավորման մեխանիզմի առկայության:

Հայաստանում իշխանությունը դեռևս զգալիորեն կենտրոնացված է ազգային մակարդակում, և ՏԻՄ-երի լիազորությունների ապակենտրոնացումը չի ուղեկցվել ֆինանսական ռեսուրսների ապակենտրոնացմամբ: Խնդրի քանակական գնահատման համար համայնքային բյուջեների փաստացի սեփական եկամուտների ցուցանիշով առաջատար 20 համայնքներում դիտարկենք սեփական եկամուտների և համայնքի պարտադիր խնդիրների լուծմանն ուղղվող ծախսերի ցուցանիշները:

**Սեփական եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը Երևանում
և առաջատար 20 համայնքներում, 2020 թ.**

| № | Տարածք | Սեփական եկամուտներ (հազ. դրամ) | | Տարածքի սեփական կենդանոցների ուղղված ընդամենը ծախսեր (հազ. դրամ) | | Սեփական եկամուտ/ծախս (%) | |
|----|-----------|-----------------------------------|------------|---|------------|-----------------------------|---------|
| | | Տարեկան ծրագիր | Ֆաստագի | Տարեկան ծրագիր | Ֆաստագի | Տարեկան ծրագիր | Ֆաստագի |
| 1 | Երևան | 26,993,250 | 24,489,932 | 39,015,954 | 34,048,309 | 69.2% | 71.9% |
| 2 | Գյումրի | 1,445,830 | 1,246,296 | 5,097,767 | 4,044,962 | 28.4% | 30.8% |
| 3 | Վանաձոր | 962,758 | 906,141 | 4,168,106 | 2,973,401 | 23.1% | 30.5% |
| 4 | Վարդաշատ | 780,184 | 830,758 | 1,843,961 | 410,232 | 42.3% | 202.5% |
| 5 | Արմավիր | 838,645 | 740,784 | 2,319,843 | 1,735,962 | 36.2% | 42.7% |
| 6 | Կապան | 715,215 | 714,970 | 4,564,328 | 2,686,749 | 15.7% | 26.6% |
| 7 | Հրազդան | 481,478 | 494,180 | 1,601,812 | 1,307,636 | 30.1% | 37.8% |
| 8 | Քաջառան | 412,064 | 413,428 | 1,329,826 | 1,033,418 | 31.0% | 40.0% |
| 9 | Արմավիր | 392,372 | 404,299 | 1,067,612 | 204,610 | 36.8% | 197.6% |
| 10 | Ջերմուկ | 360,923 | 377,820 | 790,851 | 739,909 | 45.6% | 51.1% |
| 11 | Զանգեզուր | 410,892 | 376,637 | 1,180,615 | 1,113,114 | 34.8% | 33.8% |
| 12 | Երևան | 383,167 | 350,319 | 1,404,521 | 883,544 | 27.3% | 39.6% |
| 13 | Արդաշատ | 357,609 | 336,538 | 940,110 | 741,855 | 38.0% | 45.4% |
| 14 | Աշտարակ | 311,770 | 311,628 | 996,997 | 546,612 | 31.3% | 57.0% |
| 15 | Սիսիան | 348,770 | 295,981 | 2,136,431 | 1,684,956 | 16.3% | 17.6% |
| 16 | Մասիս | 257,479 | 284,732 | 920,434 | 429,745 | 28.0% | 66.3% |
| 17 | Արինջ | 161,700 | 266,258 | 364,182 | 144,326 | 44.4% | 184.5% |
| 18 | Ջրմեժ | 242,875 | 261,593 | 466,156 | 65,975 | 52.1% | 396.5% |
| 19 | Դեմիշան | 279,391 | 251,724 | 1,193,758 | 1,077,567 | 23.4% | 23.4% |
| 20 | Գորիս | 250,240 | 246,825 | 1,693,598 | 1,169,052 | 14.8% | 21.1% |
| 21 | Բ.Անոնի | 272,327 | 236,970 | 1,356,665 | 993,912 | 20.1% | 23.8% |

Աղյուսակ 3-ում բերված տվյալները փաստում են, որ սեփական եկամուտ/սեփական ծախսեր ցուցանիշը համայնքների մեծ մասում զգալի ցածր է, այլ կերպ ասած՝ գրեթե բոլոր համայնքներում սեփական եկամուտները չեն բավականացնում սեփական լիազորությունները ֆինանսավորելու համար:


Սեփական եկամուտ/սեփական ծախսեր հարաբերակցությունը որոշակիորեն բարձր է մայրաքաղաքում՝ 71.9%, Մասիսում՝ 66.3%, Աշտարակում՝ 57%, և ամենացածրն է Գորիսում՝ 21.1% ու Սիսիանում՝ 17.6%: Ըստ տարեկան ծրագրային ցուցանիշների՝ դիտարկվող բոլոր համայնքներում նախատեսվող ծախսերը գերազանցում են հավաքագրվող սեփական եկամուտներին³:

ՀՀ-ում սոցիալական-տնտեսական ցուցանիշների տարածքային տարբերություններն առավել բնեռացված ու խնդրահարույց են մայրաքաղաք Երևանի և մարզերի միջև: Ուստի, տնտեսական զարգացման ու սոցիալական բարեկեցության մակարդակով ՀՀ-ն կարելի է համարել խիստ միակենտրոն:

Ասվածն ավելի պատկերավոր ու չափելի դարձնելու համար մշակված ցուցանիշների համակարգը տեղայնացնենք ՀՀ-ի համար: Գծապատկեր 1-ում ներկայացված են ՀՀ տարածքային զարգացման ոլորտային ինդեքսները:

³ Ցուցանիշները հաշվարկվել են հեղինակի կողմից՝ ՀՀ ՏԿԵՆ կողմից հրապարակվող «ՀՀ համայնքների բյուջետային եկամուտներ» և «ՀՀ համայնքների բյուջետային ծախսեր» հրապարակումների հիման վրա:

ՀՀ տարածքային զարգացման ոլորտային ինդեքսները 2001-2020 թթ⁴.



2001-2020թթ. ժամանակահատվածում նշանակալի աճ են գրանցել սոցիալական և տնտեսական ինդեքսները: Այսպես, սոցիալական ինդեքսը 0.06 պ.մ. արժեքից 2020թ.-ին հասել է 0.93 պ.մ.-ի՝ գրանցելով շարունակական աճ: Տնտեսական ինդեքսը, չնայած ոչ նշանակալի տատանումներին, նույնպես մոնոտոն աճ է ունեցել՝ հասնելով 0.81 պ.մ. ցուցանիշի: Պատկերն այլ է մնացած ինդեքսների պարագայում: Մասնավորապես, ժողովրդագրական ինդեքսն, ընդհանուր առմամբ, նվազել է: Այն էական տատանումների է ենթարկվել 2008-2009թթ.-ին, ինչը որոշ չափով պայմանավորված է նաև վիճակագրական մեթոդաբանության փոփոխությամբ, այնուհետև դրսևորել է հարաբերական կայունություն: Կրթական ինդեքսը որոշակի աճ է գրանցել 2004-2006թթ.-ին, որից հետո նվազել է մինչև 2015թ.-ը: Վերջին տարիներին, այդուհանդերձ, այն դրսևորում է որոշակի կայունություն՝ աճի միտումով: Ինչ վերաբերում է առողջապահական ոլորտին, ապա այստեղ, կարելի է ասել, առկա է ցիկլային զարգացում: Ամբողջ ժամանակահատվածը կարելի է բաժանել 5 շրջափուլերի, որտեղ կորը էական տատանումների է ենթարկվել՝ ընդհանուր առմամբ պահպանելով աճի միտում:

Այսպիսով, վերլուծության արդյունքները վկայում են, որ 2001-2020թթ.-ի ընթացքում ՀՀ-ում մի շարք սոցիալ-տնտեսական ցուցանիշներ կայուն աճ են գրանցել, մինչդեռ իրավիճակը խնդրահարույց է առողջապահական և հատկապես՝ կրթական ծառայությունների հասանելիության տեսանկյունից: Միաժամանակ, բնակչության թվաքանակով պայմանավորված՝ անկում են գրանցել նաև մի շարք ժողովրդագրական ցուցանիշներ:

Իրականացվող վերլուծությունն առավել արժեքավոր է տարածքային անհամաչափությունների բացահայտման տեսանկյունից: Այսպես, ըստ մարզերի ոլորտային ինդեքսների հաշվարկման և վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ անհամաչափության մակարդակը հատկապես բարձր է

⁴ Melkumyan H., Assessment of Territorial Disparities in the Context of Socio-Economic Development of the Country: The Case Study of Armenia, Review of International Comparative Management, Volume 22, Issue 5, December 2021, Bucharest 2021, pp. 670-689,

ժողովրդագրական, տնտեսական և առողջապահական ցուցանիշների դեպքում: Այդուհանդերձ, բնեռացված զարգացումը նկատելի է նաև սոցիալական ու կրթական ինդեքսների մարզային բաշխման շարքերում: Միաժամանակ, առավել մտահոգիչ է այն հանգամանքը, որ դիտարկվող բոլոր ոլորտներում ինդեքսի տատանման միջակայքն աճել է, այլ կերպ ասած, 2001-2020թթ.-ի ընթացքում տարածքային զարգացման անհամաչափությունները մայրաքաղաք Երևանում և մարզերում էլ ավելի են խորացել: Դա վկայում է տնտեսության համահարթեցման և մարզային զարգացման արդյունավետ քաղաքականության բացակայության մասին:

Իրականացված վերլուծության շրջանակներում հավաքագրված ցուցանիշների հիման վրա մեր կողմից իրականացվել է նաև կլաստերային վերլուծություն պարզելու համար մայրաքաղաքի ու մարզերի միջև առկա «հեռավորությունը» (աղյուսակ 4):

Աղյուսակ 4.

ՀՀ մարզերի ու մայրաքաղաք Երևանի կլաստերային վերլուծության արդյունքային մատրից, 2019 թ.

| | ք. Երևան | Արարատ, Կոտայք, Արմավիր | Գեղարքունիք, Շիրակ, Լոռի, Արագածոտն, Վայոց ձոր, Տավուշ | Սյունիք |
|--|-----------|-------------------------|--|-----------|
| ք. Երևան | - | 2,290,584 | 2,608,118 | 2,347,592 |
| Արարատ, Կոտայք, Արմավիր | 2,290,584 | - | 167,152 | 183,576 |
| Գեղարքունիք, Շիրակ, Լոռի, Արագածոտն, Վայոց ձոր, Տավուշ | 2,608,118 | 167,152 | - | 428,781 |
| Սյունիք | 2,347,592 | 183,576 | 428,781 | - |

Վերլուծության ընթացքում ՀՀ մարզերն ու մայրաքաղաք Երևանը դասակարգվել են 4 հիմնական խմբերում: Երևանը և Սյունիքի մարզը ընդգրկված են առանձին խմբերում, որոնց հաջորդում են Արարատի, Արմավիրի ու Կոտայքի մարզերը: Ընդ որում, Երևանում դիտարկվող ցուցանիշները զգալի բարձր են, իսկ Սյունիքի մարզը հաշվարկված արժեքով ավելի մոտ է երրորդ խմբում ընդգրկված մարզերին, քան մայրաքաղաքին: Մնացած մարզերը կազմում են վերջին խումբը և առավել մեծ հեռավորության վրա են գտնվում Երևանից:

Համայնքների խոշորացման ծրագրի արդյունքների վերաբերյալ կարծիքները հակասական են: Վերլուծաբանների մի մասը կարծում է, որ այն տարածքային սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման և տեղական ինքնակառավարման ինստիտուտի կայացման միակ արդյունավետ լուծումն է, իսկ մյուս մասը գտնում է, որ համայնքների խոշորացումը պարունակում է էական ռիսկեր և տարածքային անհամաչափությունների հետագա խորացման պատճառ կարող է հանդիսանալ⁵:

Դիտարկենք վարչատարածքային բարեփոխումների ծրագրի առաջին երկու փուլերի արդյունքում խոշորացված 18 համայնքներում (նախկին 152-ի հիման վրա) գրանցված տնտեսական օգուտները: Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ


⁵ Վարդանյան Ե., Համայնքների խոշորացման հիմնախնդիրը ՀՀ-ում, Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն, 2016 № 2 (20), էջ 36-47:

խոշորացման արդյունքում մեծ թվով համայնքներում տեղի է ունեցել համայնքապետարանների կրկնվող հաստիքների, հետևաբար նաև՝ աշխատավարձի գծով ծախսերի էական կրճատում: Այսպես, 18 համայնքային փնջերում 2019 թ.-ին, 2015 թ.-ի համեմատ, կրճատվել է 403 հաստիք: Միաժամանակ, տնտեսված գումարների հաշվին ձևավորվել են նոր տեսակի ծառայություններ մատուցող 75 աշխատատեղեր: Ինչ վերաբերում է աշխատավարձի ֆոնդին, ապա 2019 թ.-ին, 2015 թ.-ի համեմատ, գրանցվել է ավելի քան 144 մլն դրամի տնտեսում⁶:

Ուսումնասիրելով միավորված համայնքների բյուջետային եկամուտների կառուցվածքը՝ կարելի է նկատել դրանց աճ, մասնավորապես՝ սեփական եկամուտների և պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների մասով:

Գծապատկեր 2.

**Համայնքային բյուջեների սեփական եկամուտների ծավալը
2015-2019 թթ.-ին, (հազ. դրամ)**



Այսպես, ֆինանսական միջոցների կենտրոնացումը և հարկերի հավաքագրման ու վարչարարության բարելավումը խոշորացված 18 համայնքներում նպաստել են սեփական եկամուտների աճին՝ շուրջ 739.5 մլն դրամի չափով (գծապատկեր 2)⁷: Ինչ վերաբերում է ֆինանսական համահարթեցման դոտացիաներին, որոնք առավելապես ուղղվում են բյուջետային պակասուրդի ծածկմանը, ապա այս մասով բյուջետային եկամուտների աճը կազմել է 446.2 մլն դրամ:

Այսպիսով, ընդհանուր առմամբ, նշված արդյունքները տեսանելի են դարձնում համայնքների խոշորացման դրական հետևանքներն ու հիմնավորում դրա տնտեսական նպատակահարմարությունը:

Ատենախոսության երրորդ՝ «Տարածքային համաչափ զարգացման հիմնական կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում» գլխում ներկայացվել են ֆինանսական համահարթեցման կատարելագործման հիմնական ուղիները,

⁶ Մելքունյան Հ. - «Համայնքների խոշորացման ինստիտուցիոնալ հիմքերն ու ֆինանսական արդյունավետության գնահատականը», Այլընտրանք գիտական հանդես, Հոկտեմբեր-Դեկտեմբեր, 2020 թ., էջ 259-269,
⁷ Նույն տեղում:

վերլուծվել են տարածքային համաչափ զարգացմանն ուղղված սոցիալ-տնտեսական կառուցակարգերը և դրանց ներդրման հնարավորությունները:

Վերլուծելով համայնքային բյուջեների եկամուտների շարժը 2013-2020 թթ.-ի ընթացքում՝ կարող ենք փաստել, որ դրանք դիտարկվող ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, մշտական աճ են գրանցել՝ 105.8 մլրդ դրամից հասնելով 156.1 մլրդ դրամի: Դրանց կառուցվածքում ավելի դանդաղ տեմպերով աճել են հարկային եկամուտները, որտեղ գլխավոր դերը բաժին է ընկել փոխադրամիջոցներից ստացվող գույքահարկին: Այն հատկապես արագ աճ է գրանցել 2019-2020 թթ.-ին՝ կապված ավտոմեքենաների ներմուծման մեծ ծավալների հետ: Այդուհանդերձ, այս հարկատեսակը չի կարող հանդիսանալ համայնքային բյուջեի կայուն աճ ապահովող աղբյուր և պայմանավորված է կոնկրետ շուկայական իրավիճակով:

2013-2020 թթ.-ի ընթացքում ֆինանսական համահարթեցման դոտացիաները շարունակական աճ են գրանցել՝ 36.2 մլրդ դրամից հասնելով 55.3 մլրդ-ի: 2016-2020 թթ.-ի ընթացքում շուրջ 3.5 անգամ աճել է նաև համախառն սուբվենցիաների ծավալը՝ հասնելով 22.7 մլրդ դրամի⁸: Այսպիսով, պաշտոնական տրանսֆերտները շարունակում են մնալ համայնքային բյուջեների եկամուտների հավաքագրման հիմնական աղբյուրը: Համախառն բյուջետային եկամուտների կառուցվածքում պաշտոնական դրամաշնորհների մասնաբաժինը 2020 թ.-ին հասել է 52.2%-ի, որը վերջին տարիների ամենաբարձր ցուցանիշն է: Մա խոսում է համայնքների ֆինանսական անկախության բացակայության և պետական ֆինանսավորման աճող դերակատարության մասին: Ֆինանսական համահարթեցման գործող համակարգի պայմաններում պետությունը կարծես «համաձայնում է» միայն փոխհատուցել համայնքների կողմից չապահովված եկամուտների ծավալները, ինչը չի ապահովում համայնքների առաջընթաց զարգացում: Ուստի, տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունների մեղմման տեսանկյունից առաջնային խնդիր է հանդիսանում ֆինանսական համահարթեցման գործող մեխանիզմների կատարելագործումը ինչպես համայնքների առկա եկամուտների ավելացման, այնպես էլ եկամտի նոր աղբյուրների բացահայտման ուղղություններով:

Մեր կարծիքով, համայնքային բյուջեներին իրական և կայուն եկամուտներով ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է դիտարկել եկամտային հարկից և շահութահարկից մասհանումների մեխանիզմը: Վերջինիս ներդրումը, կարծում ենք՝ առավել նպատակահարմար է իրականացնել փուլային տարբերակով՝ հաշվի առնելով նաև վարչատարածքային բարեփոխումների ծրագրի ընթացքը:

Միաժամանակ, բյուջետային բարեփոխումների իրականացման սկզբնական շրջանում նախատեսվում է ֆինանսական համահարթեցման դոտացիաների շարունակական կիրառում (տարեցտարի նվազող սկզբունքով)՝ որպես հարկային մասհանումներին լրացնող միջոցներ: Իսկ վերջնական նպատակը հանդիսանում է ինքնաբավ համայնքային բյուջեների կայացումը:

⁸ Հստ Համայնքների ֆինանսիստների միավորման «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» 2014-2020 թթ. հրապարակումների, էլեկտրոնային աղբյուր՝ <https://cfoa.am/library>:

Առաջարկվող համակարգի արդյունավետությունը, բացի ֆինանսական լրացուցիչ միջոցներ ապահովելուց, հիմնավորվում է տեղական բյուջետային համակարգի ապակենտրոնացման և ՏԻՄ-երի անկախության մեծացման դրական էֆեկտներով՝ մասնավորապես, երկրի տնտեսական կյանքին անմիջական մասնակցությունը, կապիտալ ներդրումների ներգրավման, գործարարության զարգացման և նոր աշխատատեղերի ստեղծման խթանումը, բյուջետային եկամուտների տնօրինման անկախությունը, հարկային վարչարարության և հարկահավաքման գործընթացի արդյունավետության բարձրացումը: Այսպես, ֆինանսական համահարթեցման գործող համակարգի պայմաններում եկամտային կարողությունների բարձր ցուցանիշը հակադարձ ազդեցություն է թողնում տրամադրվող դոտացիաների ծավալի վրա: Այլ կերպ ասած՝ որքան բարձր է համայնքի բյուջետային ապահովվածությունը, այնքան ավելի քիչ դոտացիաներ են հատկացվում տվյալ համայնքին և հակառակը՝ տեղական հարկերի փոքր ծավալները (այդ թվում՝ հարկահավաքման գործընթացի անարդյունավետությամբ պայմանավորված) փոխհատուցվում են դոտացիաների տեսքով: Նոր մտտեցմամբ, համայնքները շահագրգռված կլինեն օգտագործել սեփական հարկային եկամուտների ողջ ներուժը⁹:

Ծրագրի ներդրման սկզբնական փուլում եկամտային հարկից և շահութահարկից մասհանումների իրականացման համար որպես հիմք կարող է հանդիսանալ ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվարկման գործող մեխանիզմը: Քանի որ առաջարկվող համակարգով որպես ֆինանսական համահարթեցման դոտացիաներին փոխարինող հիմնական աղբյուր դիտարկվում են նշված երկու հարկատեսակները, հետևաբար՝ թե՛ եկամտային հարկից, թե՛ շահութահարկից մասհանման դրույքաչափերի հաշվարկում դոտացիաները պետք է մասնակցեն ըստ որոշակի համամասնության: Որպես այդպիսին՝ առաջարկվում է դիտարկել պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքում եկամտային հարկի և շահութահարկի հարաբերակցությունը (միջինում՝ 65% և 35%):

Համակարգի գործարկման նախնական փուլում առաջնային խնդիրը պետք է լինի եկամտային հարկի՝ ըստ համայնքների հավաքագրման մեխանիզմների ներդրումը, որը, մեր կարծիքով, կարող է ապահովել հարկային գործակալների և/կամ ֆիզիկական անձանց կողմից եկամտային հարկի վերաբերյալ ՊԵԿ ներկայացվող հաշվետվության շրջանակներում:

Հավաքագրված տեղեկատվության հիման վրա արդեն հնարավոր կլինի ավելի հստակ պատկերացում կազմել ըստ համայնքների եկամտային հարկի հավաքագրման ծավալների վերաբերյալ, ինչը հիմք կհանդիսանա մասհանումների իրականացման դրույքաչափերի հաշվարկի, համայնքների նախնական ընտրության, ծրագրի իրականացման ժամանակացույցերի սահմանման համար, և մեծ հաշվով, կարելի կլինի գնահատել համայնքների ներքին ֆինանսական ներուժն ու առաջարկվող համակարգի կայացման հնարավորությունները:

⁹ Մելքունյան Հ., Համայնքների բյուջետային եկամուտների ամրապնդման նոր մեխանիզմների ներդրման հիմքերը ՀՀ-ում, Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, թիվ 1(18), Երևան, 2022, էջ 129-143,

Ինչ վերաբերում է իրականացվելիք մասհանումների դրույքաչափին, ապա համայնքային բյուջեների ծախսային պլանավորման տեսանկյունից ցանկալի է, որ այն լինի ֆիքսված: Իսկ դրա համար պետք է հիմք հանդիսանան համայնքի շրջանակներում հավաքագրվելիք եկամտային հարկի և ֆինանսական համահարթեցման դոտացիաների ծավալները: Ընդ որում, հաշվի առնելով տնտեսական ակտիվության փոփոխությունները՝ նպատակահարմար է յուրաքանչյուր տարի դրույքաչափն ամրագրել հաշվարկային տարվան նախորդող 3 տարիների ցուցանիշների հիման վրա, իսկ մինչև 3 տարին լրանալը, առկա նախորդող տարիների ցուցանիշների հիման վրա:

Գործնականում, համայնքների մեծամասնությունում հավանական է այնպիսի իրավիճակ, երբ հավաքագրվող եկամտային հարկի ծավալները «չծածկեն» ֆինանսական համահարթեցման դոտացիաների մեծությունը: Այդ պարագայում եկամտային հարկից մասհանումը համայնքին պետք է իրականացվի ամբողջությամբ, իսկ առաջացող տարբերությունը փոխհատուցվի դոտացիաների տեսքով: Միաժամանակ, համայնքային բյուջեների մուտքերում պետք է ընթանա հարկային եկամուտների մասնաբաժնի շարունակական աճ՝ ի հաշիվ դոտացիաների մասնաբաժնի նվազեցման՝ նախապես սահմանված ժամանակացույցով:

Ինչ վերաբերում է շահութահարկից մասհանումներին, ապա այս դեպքում համայնքային ռեզիդենտության սկզբունքը չի կարող արդյունավետ կիրառվել՝ պայմանավորված շատ կազմակերպություններում շահույթի ձևավորման տարածքային բաշխման բարդություններով: Ուստի, մեր կարծիքով, շահութահարկի դեպքում առավել նպատակահարմար է կիրառել հարկային մասհանումների այլ մեխանիզմ: Մասնավորապես, մեր կողմից առաջարկվող մոտեցմամբ, անհրաժեշտ է յուրաքանչյուր համայնքի համար շահութահարկից մասհանումների դրույքաչափը ֆիքսել պետական բյուջեի՝ շահութահարկի գծով հարկային եկամուտների նկատմամբ՝ ըստ տվյալ համայնքի ստացած փաստացի ֆինանսական համահարթեցման դոտացիաների (35%-ի չափով): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական բյուջեի հարկային եկամուտները, որպես կանոն, ունեն աճի միտում՝ համայնքները նույնպես շահութահարկի գծով կստանան նվազագույնը դոտացիան փոխհատուցող մասհանումներ:

Ատենախոսության վերջին ենթագլխում խնդիր է դրվել բացահայտել համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված առավել արդյունավետ կառուցակարգերը, գործիքներն ու մեխանիզմները, որոնք կարող են նպաստել ՀՀ համայնքներում տնտեսական կյանքի ակտիվացմանը, տնտեսության առանձին ոլորտների զարգացմանը, ՏԻՄ-երի ֆինանսական կայունությանն ու նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը, որոնք, վերջին հաշվով, կհանգեցնեն բնակչության կյանքի որակի բարելավմանը:

Մեր կարծիքով, ՀՀ-ում առավել նպատակահարմար է դիտարկել տարածքային համաչափ զարգացմանն ուղղված հետևյալ կառուցակարգերը և գնահատել դրանց ներդրման կամ հետագա զարգացման հնարավորությունները.

- ✓ միջհամայնքային համագործակցություն,

- ✓ տարածքային աճի բևեռներ և կենտրոններ,
- ✓ ՏԻՄ-երի երկարաժամկետ ֆինանսական պլանավորում և մոնիթորինգ,
- ✓ «Կառավարություն-ՏԻՄ-մասնավոր հատված» համագործակցություն,
- ✓ զարգացման առաջնահերթությունների սահմանում՝ գյուղատնտեսություն, զբոսաշրջություն, սահմանամերձ համայնքներ:
- ✓ զարգացման սոցիալական ուղղվածություն՝ կրթություն, առողջապահություն:

Եզրակացություններում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները և հակիրճ ներկայացվել են հետևյալ եզրակացություններն ու առաջարկությունները.

1. Տնտեսության տարածքային զարգացման անհամաչափությունները պայմանավորված են բազմաթիվ գործոններով և կրում են օբյեկտիվ բնույթ: Դրանց խորացումն առավել մտահոգիչ է զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների դեպքում, որտեղ տնտեսական զարգացման անհամաչափությունները, ֆինանսավորման միջոցների սակավության պայմաններում, հանգեցնում են նաև սոցիալական շերտավորման:
2. Տարածքային զարգացման քաղաքականության միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում կարող ենք փաստել, որ ընդհանուր առմամբ, առանձնացվում են երկու հիմնական մոդելներ՝ ֆրանսիական (մայրցամաքային) և անգլո-սաքսոնական: Ներկայացվել են նաև տարածքային զարգացման քաղաքականության առանձնահատկությունները մի շարք երկրներում ու տարածաշրջաններում:
3. ՀՀ մարզերի և համայնքների ֆինանսների վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ համայնքների՝ օրենքով սահմանված լիազորությունների և դրանց իրագործման համար անհրաժեշտ միջոցների միջև անհամաչափություններն ակնհայտ են: Այստեղ ֆինանսական ապակենտրոնացումը և ինքնուրույնությունը տեղական մակարդակում դեռևս շոշափելի արդյունքներ չեն գրանցել:
4. Երկրի և նրա առանձին տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման և դրա համաչափության գնահատման տարաբնույթ մոտեցումների ուսումնասիրության արդյունքում ցուցանիշների այդպիսի համակարգ է մշակվել նաև մեր կողմից: Դիտարկվող 18 երկրներում գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ թեև աճի բարձր միտումներ են գրանցվել մի շարք ոլորտներում, այդուհանդերձ, այդ աճն առավել հաճախ հանգեցրել է երկրի սոցիալ-տնտեսական ներուժի կենտրոնացմանը մայրաքաղաքում կամ այլ զարգացած շրջաններում:
5. Մշակված ցուցանիշների համակարգը տեղայնացվել է նաև ՀՀ մարզերի համար: Վերլուծության արդյունքները վկայում են, որ 2001-2020 թթ.-ի ընթացքում ՀՀ-ում մի շարք սոցիալ-տնտեսական ցուցանիշներ կայուն աճ են գրանցել, մինչդեռ իրավիճակը խնդրահարույց է առողջապահական և հատկապես՝ կրթական ծառայությունների հասանելիության տեսանկյունից: Միաժամանակ, բնակչության թվաքանակով պայմանավորված՝ անկում են գրանցել նաև մի շարք ժողովրդագրական ցուցանիշներ:

Ըստ մարզերի ոլորտային ինդեքսների հաշվարկման և վերլուծության արդյունքում առավել մտահոգիչ է այն հանգամանքը, որ դիտարկվող բոլոր ոլորտներում ինդեքսի տատանման միջակայքն աճել է, այլ կերպ ասած, 2001-2020 թթ.-ի ընթացքում տարածքային զարգացման անհամաչափությունները մայրաքաղաք Երևանում և մարզերում էլ ավելի են խորացել: Դա վկայում է տնտեսության համահարթեցման և մարզային զարգացման արդյունավետ քաղաքականության բացակայության մասին:

6. Ըստ ներկայացված 20 ցուցանիշների իրականացված կլաստերային վերլուծության արդյունքում ՀՀ մարզերը ընդգրկվել են տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող 4 հիմնական խմբերում:
7. Թեև համայնքների խոշորացման ծրագիրը դեռևս ընթացքում է, այդուհանդերձ, վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ ծրագրի առաջին երկու փուլերի արդյունքում խոշորացված 18 համայնքներում տեսանելի են դրա տնտեսական արդյունքները: Մասնավորապես, տեղի է ունեցել կառավարման մարմինների օպտիմալացում և աշխատավարձերի գծով ծախսերի զգալի տնտեսում: Խոշորացումը հնարավորություն է ընձեռել նաև մեծացնելու համայնքային եկամուտները. աճել են պետության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, հարկերի հավաքագրման ու վարչարարության բարելավումը նպաստել են նաև սեփական եկամուտների որոշակի աճին:
8. Որպես համայնքների բյուջետային եկամուտների ավելացման և ՏԻՄ-երի ֆինանսական ինքնուրույնության ապահովման հիմնական ուղղություն՝ մեր կողմից առաջարկվում են եկամտային հարկից և շահութահարկից կատարվող մասհանումները: Մասհանումների դրույքաչափի հաշվարկման հիմք պետք է հանդիսանա ֆինանսական համահարթեցման գործող սկզբունքների կիրառումը: Ֆինանսական համահարթեցման դոտացիաների փոխարինումը եկամտային հարկով և շահութահարկով նախատեսվում է իրականացնել ըստ պետական բյուջեի կառուցվածքում վերջիններիս ունեցած տեսակարար կշռի՝ 65% և 35% հարաբերակցությամբ:
9. Մեր կողմից առանձնացվել են ՀՀ տարածքային համաչափ զարգացմանն ուղղված հիմնական կառուցակարգերը, գնահատվել են դրանց ներդրման կամ հետագա զարգացման հնարավորությունները, ներկայացվել են առաջարկություններ:

Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակվել են հեղինակի հետևյալ 8 գիտական գործվածներում.

1. Մելքումյան Հ., «Տնտեսության տարածքային զարգացման սոցիալ-տնտեսական բնութագրիչների վերլուծություն (ՀՀ օրինակով)», ՀՀ տնտեսության զարգացման առաջնահերթությունները. Ներքին և արտաքին մարտահրավեր-ներ, ՀՊՏՀ 28-րդ գիտաժողովի նյութեր, Երևան, 2021, էջ 346-359,

2. Մելքումյան Հ., «Համայնքների խոշորացման ինստիտուցիոնալ հիմքերն ու ֆինանսական արդյունավետության գնահատականը», Այլընտրանք գիտական հանդես, Հոկտեմբեր-Դեկտեմբեր, 2020 թ., էջ 259-269,
3. Մելքումյան Հ., «Համայնքների բյուջետային եկամուտների ամրապնդման նոր մեխանիզմների ներդրման հիմքերը ՀՀ-ում», Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, թիվ 1(18), Երևան, 2022, էջ 129-143,
4. Мелкумян О.А., Ахвердян Д.Н., Проблема региональной асимметрии в контексте социально-экономического развития страны, Экономика и предпринимательство, № 11 (136), 2021, стр. 637-646,
5. Мелкумян О.А., Региональные особенности доступности образования в Республике Армения, Традиции и новации в профессиональной подготовке и деятельности педагога, Сборник научных трудов международной научно-практической конференции, Выпуск 18, Тверской государственный университет, Тверь 2020, стр. 34-41,
6. Мелкумян О.А., Анализ социально-экономических механизмов территориального развития (на примере Республики Армения), Инновации. Наука. Образование, № 53 (март), Тольятти, 2022, стр. 1300-1309,
7. Melkumyan H., Assessment of Territorial Disparities in the Context of Socio-Economic Development of the Country: The Case Study of Armenia, Review of International Comparative Management, Volume 22, Issue 5, December 2021, Bucharest 2021, pp. 670-689,
8. Melkumyan H., Assessment of the gap between local government authorities and their financing mechanisms, Вестник РАУ, серия: гуманитарные и общественные науки, (39) N3/2021, Ереван, 2021, стр. 72-83.

ПРОБЛЕМЫ НЕПРОПОРЦИОНАЛЬНОГО ТЕРРИТОРИАЛЬНОГО РАЗВИТИЯ
ЭКОНОМИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление народным хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится на заседании специализированного совета 015 по экономике ВАК РА при экономическом факультете ЕГУ 8-ого июля, 2022 года в 15:00 часов по адресу: г. Ереван 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования. Асимметрии в территориальном развитии экономики в большей или меньшей степени характерны для всех стран и являются серьезным препятствием для их социально-экономического развития. Углубление диспропорций в территориальном развитии вызывает еще большую тревогу в развивающихся странах и странах с переходной экономикой, где диспропорции в экономическом развитии при отсутствии финансовых ресурсов также приводят к социальному расслоению.

Диспропорции территориального развития в Республике Армения особенно углубились вместе с ускорением экономического роста с 2000-х годов, что в основном отразилось на возрастании экономической роли и значения столицы Еревана, в результате чего разрыв в уровне жизни между Ереваном и регионами неуклонно растет. Асимметрия между регионами также значительна.

Поэтому в рамках диссертации разъяснение причин асимметрий в социально-экономическом развитии экономических территорий (регионов) РА, оценка их последствий, представление практических предложений по смягчению или нейтрализации существующих диспропорций, изучение возможностей их внедрения в РА являются актуальными научными проблемами.

Цель и задачи исследования. Основная цель диссертации - выявить асимметрии территориального развития экономики РА на основе изучения международного и отечественного опыта, оценить их социально-экономические последствия и предложить практические программы, направленные на смягчение этих асимметрий. Для достижения указанной цели в работе были предложены и решены следующие задачи:

- изучить сущность и особенности территориального развития экономики, изучить научную литературу по теме,
- изучить зарубежный опыт политики территориального развития, оценить возможности их внедрения в Армении,
- разработать общий индекс количественной оценки территориального социально-экономического развития стран,
- оценивать доходы бюджетов общин в разрезе реализации полномочий, предусмотренных законом для органов местного самоуправления,

- проанализировать экономическую и социально-политическую целесообразность программы административно-территориальной реформы,
- предложить программу реформ по усилению доходной части бюджетов общин, направленную на обеспечение финансовой самостоятельности органов местного самоуправления,
- рассмотреть основные структуры, направленные на сбалансированное развитие территории, оценить возможности их реализации или дальнейшего развития, дать рекомендации.

Научная новизна исследования. Основные результаты диссертации имеют теоретическое, методологическое и практическое значение, научная новизна которых заключается в следующем:

- В результате изучения международного опыта количественной оценки территориального развития разработана система показателей, на основе которых рассчитаны отраслевые индексы, характеризующие социально-экономическое развитие стран и их отдельных территорий. Результаты их расчета и анализа показали, что экономическое развитие в большинстве наблюдаемых стран привело к углублению территориальных диспропорций.
- В результате анализа муниципальных бюджетов проведена количественная оценка финансовой обеспеченности органов местного самоуправления. Определена степень финансовой устойчивости общин и выявлены основные влияющие факторы.
- Для регионов РА рассчитаны отраслевые индексы территориального развития, в результате чего дана оценка степени социально-экономической поляризации нашей страны. При этом на основе тех же показателей был проведен кластерный анализ, в результате которого регионы были включены в 4 основные группы, подчеркнув лидерство столицы и Сюникской области над остальными регионами.
- Проведена оценка экономической эффективности программы административной реформы, на основании которой были зафиксированы как экономия средств, увеличение дотаций и собственных доходов, эффективное перераспределение государственных должностей, так и ряд вопросов, связанных с укрупнением общин.
- Проанализированы отчисления по подоходному налогу и налогу на прибыль как альтернативные источники доходов местного бюджета и основное направление обеспечения финансовой независимости органов местного самоуправления.
- Были выделены основные структуры, направленные на сбалансированное территориальное развитие Республики Армения, оценены возможности их введения или дальнейшего развития, представлены некоторые практические подходы, направленные на реализацию этих возможностей.

**PROBLEMS OF DISPROPORTIONAL TERRITORIAL DEVELOPMENT OF THE
ECONOMY IN THE REPUBLIC OF ARMENIA**

Abstract of the dissertation for the degree of PhD of Economics in the specialty 08.00.02 - "Economics, Management of the national economy and its branches."

The defense of the dissertation will take place at 15:00 on July 8th, 2022, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia.

SUMMARY

Relevance of the research topic. Asymmetries in the territorial development of the economy are more or less characteristic of all countries and are a serious obstacle to their socio-economic development. Deepening disparities in territorial development are of even greater concern in developing countries and countries with economies in transition, where disproportions in economic development in the absence of financial resources also lead to social stratification.

The disproportions in territorial development in the Republic of Armenia have particularly deepened along with the acceleration of economic growth since the 2000s, which mainly reflected in the growing economic role and importance of the capital city of Yerevan, as a result of which the gap in living standards between Yerevan and the regions is steadily growing. The asymmetry between regions is also significant.

Therefore, within the framework of the dissertation, explaining the causes of asymmetries in the socio-economic development of the economic territories (regions) of the Republic of Armenia, assessing their consequences, presenting practical proposals for mitigating or neutralizing existing imbalances, studying the possibilities of their implementation in the Republic of Armenia are actual scientific problems.

Purpose and objectives of the study. The main goal of the dissertation is to identify asymmetries in the territorial development of the RA economy based on the study of international and domestic experience, assess their socio-economic consequences and propose practical programs aimed at mitigating these asymmetries. To achieve this goal, the following tasks were proposed and solved in the work:

- to study the essence and features of the territorial development of the economy, to study the scientific literature on the topic,
- study foreign experience of territorial development policy, assess the possibilities of their implementation in Armenia,
- to develop a general index for the quantitative assessment of the territorial socio-economic development of countries,
- assess the revenues of the municipal budgets in the context of the implementation of the powers provided by law for local governments,
- analyze the economic and socio-political expediency of the program of administrative-territorial reform,

- propose a reform program to strengthen the revenue side of municipal budgets, aimed at ensuring the financial independence of local governments,
- consider the main structures aimed at the balanced territorial development, assess the possibilities of their implementation or further development, and make recommendations.

Scientific novelty of the research. The main results of the dissertation are of theoretical, methodological and practical significance, the scientific novelty of which is as follows:

- As a result of studying international experience in quantitative assessment of territorial development, a system of indicators was developed, on the basis of which sectoral indices were calculated that characterize the socio-economic development of countries and their individual territories. The results of their calculation and analysis showed that economic development in most of the observed countries has led to a deepening of territorial disproportions.
- As a result of the analysis of municipal budgets, a quantitative assessment of the financial security of local governments was carried out. The degree of financial stability of the communities was determined and the main influencing factors were identified.
- For the regions of the Republic of Armenia, sectoral indices of territorial development were calculated, as a result of which an assessment was made of the degree of socio-economic polarization of our country. At the same time, based on the same indicators, a cluster analysis was made, as a result of which the regions were included in 4 main groups, emphasizing the leadership of the capital and Syunik region over the rest of the regions.
- An assessment of the economic efficiency of the administrative reform program was carried out, on the basis of which both savings in funds, an increase in subsidies and own incomes, an effective redistribution of public posts, and a number of issues related to the enlargement of communities were recorded.
- The allocations from income tax and profit tax are analyzed as alternative sources of local budget revenues and the main direction of ensuring the financial independence of local governments.
- The main structures aimed at the balanced territorial development of the Republic of Armenia were identified, the possibilities of their introduction or further development were assessed, and some practical approaches aimed at realizing these opportunities were presented.

